ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

15.06.12 № 1.1/1.5/7975-12

Ձեր № _____

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՀԿ-Ի ԻՐԱՎԱԲԱՆ ՊՐՆ. ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան Ձեր 29.05.2012թ. թիվ 173-ի 3 (մտից՝ 31.05.2012թ. թիվ 18829-12) և 173-ի 4 (մտից՝ 31.05.2012թ. թիվ 18828-12) հարցումների՝ հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բոլոր քաղաքացիական ծառայողներին, այդ թվում՝ լիցենզավորման գործակալության /այսուհետ՝ Գործակալություն/ և ֆինանսական վերահսկողության տեսչության /այսուհետ՝ Տեսչություն/ աշխատակիցներին պարգևավճարները տրամադրվում են <<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, որով սահմանվում են քաղաքացիական ծառայողների պարգևատրման աղբյուրները, չափերը և կարգը: ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պարգևատրումների համար նախատեսված գումարը 2011 թվականին կազմել է 92,334.1 հազ. դրամ:

Միևնույն ժամանակ հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսվել է նաև ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների խրախուսման նպատակային ֆոնդ (հիմք՝ <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մաս)՝ 393500.0 հազ. դրամի չափով:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 2011 թվականին Գործակալության և Տեսչության աշխատակիցները նվերներով չեն պարգևատրվել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ